

Ի Մ «ՆՈՒԱԳՆԵՐ»Ի Ց

\* \*

Օ՛ , երկնքի մռայլ ամպե՛ր ,  
 Կուտակեցէ՛ք միասին ,  
 Սփռէ՛ք մթին ձեր սեւ քողը ,  
 Մածկէ՛ք արեւ ու լուսին ,  
     Մըռայլեցրէ՛ք դուք շողշողուն ,  
     Վառ ասաղիւրը բիւրաւոր ,  
     Մըռայլեցրէ՛ք դուք երկնային  
     Կանթեղները լուսաւոր :

Թո՛ղ ամեն տեղ թագաւորի

Սկզբնական խաւարը •

Թո՛ղ մշուշը քաօսական

Պատի ամբողջ աշխարհը • —

Գեղեցկուհուս դէմքի փայլը  
 Բաւակա՛ն է աշխարհքին •  
 Նորա գոհար , հուր աչերը  
 Բաւակա՛ն են երկնքին :

\* \*

Երբ ժպտում էր ուրախ , զըւարթ

Գեղ դարունը կենսատու —

Շուշանների , վարդերի մէջ

Կանգնած էինք ես ու դու :

Նախշուն հաւքի երամները  
 Ճախրում էին , երգ ասում •  
 Բիւրեղափայլ առակները  
 Հոսում էին ու խօսում :

Դու փնջեցիր անուշաբոյր

Մաղիկները խնդալով

Ու նայեցիր մեղամաղձոտ

Իմ երեսին ժպտալով :

„Մաղիկներից ո՞րն ես սիրում ,“  
 Հարցրիր դու ինձ մեղմ ու հեզ :  
 Պատասխանըս այսպէս տըւի •  
 — Ես սիրում եմ միայն քեզ ...